Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.ysu.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 3(6), 2020

«Գիտական Արցախ» *պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

«Գիտական Արցախ» *պարբերականը կետեղված է www.elibrary.ru կայքում:*

*The **«Scientific Artsakh»** journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The **«Scientific Artsakh»** journal is posted on www.elibrary.ru website.*

*Журнал **«Научный Арцах»** включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).*

*Журнал **«Научный Арцах»** размещен на сайте www.elibrary.ru.*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝
Լենա ԱՍՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր **(Տառագոնա, Իսպանիա)**
Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ
Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչիկ ԳԱԼՍՏՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ջուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Կոստրոմա, ՌԴ)**
Գևորգ ԴԱՆԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Արման ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ալֆրեդ դե ԶԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Ժնև, Շվեյցարիա)**
Սեյրան ԶԱՔԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Օլշտին, Լեհաստան)**
Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Մինսկ, Բելառուս)**
Վալենտինա ԼԱՊԱԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ)**
Օտտո ԼՈՒԽՏԵՐՀԱՆԴՏ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Համբուրգ, Գերմանիա)**
Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **(Լվով, Ուկրաինա)**
Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **(Դոնի Ռոստով, ՌԴ)**
Գարիկ ՔԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Տիգրան ՔՈՉԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 3(6), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 288 էջ:

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 3-րդ (6-րդ) համարի տպագրությանն աջակցել է «SBS» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ISSN 2579-2652

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2020

Published by the Yerevan State University Academic Council Decision

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

EDITORIAL COUNCIL

Chairman: **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

Editor-in-Chief: **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: **Tehmina MARUTYAN,** Ph.D in Philology, Associate Professor

Members:
Lena ASRYAN, Doctor of History (**Tarragona, Spain)**
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia)**
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine)**
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor **(Minsk, Belarus)**
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor **(Moscow, Russia)**
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany)**
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor **(Rostov-on-Don, Russia)**
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor **(Geneva, Switzerland)**
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor **(Olsztyn, Poland)**

Scientific Artsakh, № 3(6), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 288 pages.

The publication of the 3rd (6th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «SBS» LLC.

Издается решением учёного совета Ереванского государственного университета

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: **Арам СИМОНЯН,** директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: **Аветик АРУТЮНЯН,** кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: **Теймина МАРУТЯН,** кандидат филологических наук, доцент

Члены:
Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук **(Таррагона, Испания)**
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор **(Ростов-на-Дону, Россия)**
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент **(Львов, Украина)**
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор **(Кострома, Россия)**
Джульетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор **(Ольштын, Польша)**
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор **(Женева, Швейцария)**
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент **(Минск, Беларусь)**
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор **(Москва, Россия)**
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор **(Гамбург, Германия)**
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 3(6), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 288 страницы.

Номер 3(6) журнала «Научный Арцах» был отпечатан при содействии ООО «SBS».

Հովսեփ Բաբայան. Ռուսաստան և Թուրքիա. համագործակցության և մրցակցության միջև.....96
Hovsep Babayan. Russia and Turkey between Cooperation and Rivalry
Овсеп Бабаян. Россия и Турция: между сотрудничеством и соперничеством

Ժաննա Հարությունյան. Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը հյուսիսային Աֆրիկայի պետությունների նկատմամբ 1970-1991թթ. 105
Zhanna Harutyunyan. The French Foreign Policy in the North African Countries in 1970-1991
Жанна Арутюнян. Французская внешняя политика по отношению к северо-африканским странам в 1970-1991 гг.

Մարինե Մովսիսյան. Ցանցերի դերը Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման և ինստիտուցիոնալացման գործընթացներում.....111
Marine Movsisyan. The Role of Networks in the Processes of Democratization and Institutionalization of the Republic of Armenia
Марине Мовсисян. Роль сетей в процессах демократизации и институционализации в Республике Армения

Նորիկ Նորիկյան. Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության տնտեսական բաղադրիչի ապահովման հիմնահարցերը.....124
Norik Norikyan. Main Issues of Ensuring the Economic Component of Military Policy of the Republic of Armenia
Норик Норикян. Основные вопросы обеспечения экономической составляющей военной политики Республики Армения

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, JURISPRUDENCE, ЮРИСПРУДЕНЦИЯ

Վահե Թորոսյան. Խղճի ազատությունը անտիկ շրջանի իրավաքաղաքական մտքի համատեքստում.....131
Vahe Torosyan. Freedom of Conscience in the Context of the Legal-Political Thought of the Ancient Period
Ваге Торосян. Свобода совести в контексте право-политической мысли античного периода

Տիգրան Մարկոսյան. Կանխամտածված սնանկության հիմքով քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման հիմնախնդիրները.....138
Tigran Markosyan. Problems of the Enforcement of Civil Liability on the Basis of Premeditated Bankruptcy
Тигран Маркосян. Проблемы применения гражданско-правовой ответственности на основе преднамеренного банкротства

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ

Վահե Հակոբյան. Իբրահիմ Ալ-Հալաբին և «Ծովերի միաձուլում» աշխատությունը.....149
Vahe Hakobyan. Ibrahim Al-Halabi and «The Confluence of the Seas» Work
Ваге Акопян. Ибрагим Аль-Халаби и его произведение «Слияние Морей»

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 1970-1991թթ.*

ՀՏԴ 94 (44+61)

ԺԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
միջազգային հարաբերությունների և դիվանագիտության
ամբիոնի ասպիրանտ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն,
jane.harutyunyan@gmail.com

Հոդվածում նպատակ է դրվել ուսումնասիրել Ֆրանսիայի հարաբերությունները Հյուսիսային Աֆրիկայի պետությունների հետ, որոնք նախկինում ֆրանսիական գաղութներ էին, այդ պետությունների նկատմամբ որդեգրած քաղաքական գիծը և փոխհարաբերությունների առանձնահատկությունները: Նպատակի բացահայտման համար հոդվածում առաջ է քաշվել հետևյալ խնդիրը՝ պարզել Հյուսիսային Աֆրիկայի պետությունների հետ փոխհարաբերություններում քաղաքական ազդեցության լծակների սակավությամբ պայմանավորված հիմնական շեշտը մշակութային և լեզվական համագործակցության բնագավառ տեղափոխելու ջանքերը: Հոդվածը շարադրված է արխիվային փաստաթղթերի, մենագրությունների և հոդվածների վերլուծության հիման վրա՝ պատմահամադրական, պատմահամեմատական և գործառնական մեթոդների կիրառմամբ: Արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Հյուսիսային Աֆրիկայի պետությունների նկատմամբ որդեգրած արտաքին քաղաքական ռազմավարությունում և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ ռազմական, և՛ միգրացիոն քաղաքականության կիրառման ոլորտներում Ֆրանսիան հիմնականում ձախողում էր: Միակ առանցքը, որը իրոք կապում էր Ֆրանսիան Հյուսիսային Աֆրիկայի պետությունների հետ և որոշակի դիվիդենտներ ու ազդեցության լծակներ տալիս, մշակութային, կրթական, լեզվական քաղաքականությունն էր:

Հիմնաբառեր՝ *Ֆրանսիա, Հյուսիսային Աֆրիկա, Մաղրիբ, գաղութ, ռազմական քաղաքականություն, տնտեսական քաղաքականություն, միգրացիոն քաղաքականություն, մշակութային քաղաքականություն:*

Ապագաղութացման շարժման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում ֆրանսիական գաղութատիրության դեմ Հյուսիսաֆրիկյան Թունիսում, Մարոկկոյում և Ալժիրում անկախության ձեքբերման համար մղված տևական, հերոսական պայքարը, որը միաժամանակ արաբական ազգային-ազատագրական շարժման կարևոր բաղադրիչներից է: Մաղրիբի պետությունների հաղթանակում իր դերակատարությունն ունեցավ նաև Արաբական պետությունների լիգան, որը մեծ ծառայություն մատուցեց այդ երկրների խնդիրները միջազգայնացնելու ուղղությամբ[310]:

---

* Հոդվածը ներկայացվել է 15.05.2020թ., գրախոսվել՝ 16.05.2020թ., տպագրության ընդունվել՝ 20.09.2020թ.:

[310] **Կարամանուկյան Շ.,** Արաբական պետությունների լիգան և Մաղրիբի ժողովուրդների պայքարը ազգային անկախության համար 1945-1956, էջ 56:

Ինքնագիտակցության աճը, անկախության նվաճումը և ինքնուրույն պետությունների կազմավորումը կանխորոշեցին զգալի քաղաքական ընդհանրության մեջ տարբեր պետությունների միավորման գործընթացի արագացումը[311], ուստի Աֆրիկայի նորանկախ պետությունները փոքր պետություններին բնորոշ «վարքագիծ» չցուցաբերեցին, չփորձեցին արագորեն ընդգրկվել գործող միջազգային կազմակերպություններում: Այսօրինակ քաղաքականութունը հնարավորություն կտար շահած դուրս գալ և օգնություն ակնկալել երկու կողմից հավասարապես[312]:

Հյուսիսային Աֆրիկայում Ֆրանսիայի քաղաքականության ուսումնասիրության համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել նաև Ֆրանս-ՆԱՏՕ հարաբերությունները: Եթե Մեծ Բրիտանիան, օրինակ, պաշտպանում էր ՆԱՏՕ-ի «ծավալման» քաղաքականությունը, ապա Ֆրանսիան, ուղղակիորեն չհակադրվելով դրան, փորձում էր անհատական քաղաքական կուրս վարել՝ չհամապատասխանեցնելով իր շահերն ու նպատակները ՆԱՏՕ-ի հետ, բայց մեծապես հաշվի առնել դրանք Հյուսիսային Աֆրիկայում իր ռազմավարական ծրագրերում:

Սակայն Մաղրիբի պետությունները որդեգրել էին «բլոկային» հակադրումից զերծ քաղաքական գիծ և 1960 թվականից հետո նորանկախ աֆրիկյան պետություններն անդամակցեցին Միավորված ազգերի կազմակերպությանը՝ ցանկանալով հանդես գալ որպես երրորդ ուժ ԱՄՆ-ից և Խորհրդային Միությունից հետո[313]: Բացի ՄԱԿ-ից, կային ևս մի քանի միջազգային կազմակերպություններ, որոնց միջոցով Աֆրիկյան նորանկախ պետությունները փորձում էին հանդես գալ որպես համախմբված ուժ, ինչպիսիք էին՝ Աֆրիկյան Միությունը և Իսլամական Կոնֆերանս կազմակերպությունը (այնուհետև՝ Իսլամական համագործակցության կազմակերպությունը): Սակայն տարբեր աշխարհաքաղաքական և քաղաքական կողմնորոշումները հաճախ անհնարին էին դարձնում համատեղ հանդես գալու նրանց ցանկությունը: Միաժամանակ մեծացավ իսլամական ծայրահեղականության վտանգը Եվրոպայում թե՛ քաղաքական, թե՛ ահաբեկչական առումով[314]:

Համագործակցության մեխանիզմների ձևավորումը

Հյուսիսային Աֆրիկայում իր նախկին գաղութների (Ալժիր, Մարոկկո, Թունիս) անկախություն ձեռք բերելուց հետո Ֆրանսիայի արտաքին քաղաքական օրակարգում էր հարաբերությունների կարգավորման և համագործակցության եզրեր որոնելու խնդիրը: Փարիզը մշտապես ձգտել է պահպանել քաղաքական և տնտեսական ամուր կապերն այդ տարածաշրջանի հետ: Ավելին, Ֆրանսիայի նախկին գաղութների մեծ մասի ոսկու և արժութային պահուստները մինչև այժմ պահվում են Ֆրանսիայի Կենտրոնական բանկում, ինչը զգալի լծակներ է ապահովում Փարիզի համար այս պետությունների հետ փոխհարաբերություններում: Ֆրանսիան լծակներ ուներ աֆրիկյան շուկաներում և մեծապես շահագրգռված էր իր ապրանքը այնտեղ յուրացնելու գործում, իսկ մշակութային կապը պահում էր ֆրանսերենի միջոցով: Բայց ամեն դեպքում Ֆրանսիան մտահոգված էր, որ իր ազդեցությունը Հյուսիսային Աֆրիկայում նվազում է, ուստի վեկտորն ուղղում էր տարածաշրջանում անվտանգության խնդիրների շուտափույթ լուծմանը[315]: Ազդեցության լծակներ ստեղծելու համար Ֆրանսիան առանցքում պահեց «փափուկ ուժի» կիրառման մեխանիզմը: Վերջինս

---

[311] Նույն տեղում:

[312] **San-shiun Tseng,** "The Republic of China's Foreign Policy towards Africa: The Case of ROC-RSA Relations, Johannesburg, November 2008, page 70

[313] **Wivel, Anders.** Optimizing Small State Interestsin The European Union: Lessons from the Past, Prospects for the Future. Latvijas Intereses Eiropas Savienībā 3, 2012, page 49.

[314] **Փաշայան Ա.**, Իսլամի արմատականացումը Արևմտյան Եվրոպայում, Նորավանք գիտակրթական հիմնադրամ, 2005, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=890

[315] **Зверева Т.В.,** Внешняя политика современной Франции. – М., 2014, С. 241.

Հյուսիսային Աֆրիկայում ազդեցության պահպանման մեխանիզմ է՝ ներկայացված «գրավիչ նախասիրությունների» համակարգի միջոցով: Մեծ հաշվով տնտեսական ու ռազմական հիմքերի բացակայությունը ստիպեց ֆրանսիացիներին ամրապնդել մշակութային ու կրթական կապերը և որպես «փափուկ ուժի» կիրառման ռեսուրս՝ հանդես եկավ մշակույթը՝ հիմնականում լեզուն, գիտությունն ու կրթությունը: Այս միջոցով Ֆրանսիան սկսեց «գայթակղել» Հյուսիսային Աֆրիկայի պետություններին, ինչն էլ դարձավ Հյուսիսային Աֆրիկայում արտաքին քաղաքական ռազմավարության փոփոխության հիմնաքարը: Ալժիրյան պատերազմում փաստացի պարտություն կրելուց հետո զուրկ լինելով քաղաքական լծակներից՝ հիմնական շեշտը դրվեց մշակութային և լեզվական կապերի ամրապնդման միջոցով ազդեցության լծակների ձեռքբերման կամ առնվազն ներկայության ապահովման վրա: Բայց այս գործում էլ ամեն ինչ այդչափ հեշտ չէր, քանզի առաջ էր գալիս կառավարման և վերահսկողության բարդությունը: Ի տարբերություն կոշտ ուժի, որի հիմնական ռեսուրսները, օրինակ՝ զինված ուժերը, գտնվում են Ֆրանսիայի կառավարության ուղղակի վերահսկողության տակ, ապա «փափուկ ուժի» ռեսուրսները՝ արժեքներ, մշակույթ, լեզու, կառավարման ուղղակի վերահսկողությունից դուրս են և դրանց ազդեցությունը կախված է թիրախ լսարանի՝ Հյուսիսային Աֆրիկայի պետությունների ընդունելությունից:

Հեղափոխությանը հաջորդող առաջին տարիներին Ալժիրի՝ Ֆրանսիայից կախվածությունը դեռևս զգալի էր, և Ալժիրում այդ կախվածությունից զերծ մնալու հակասական մոտեցումներ կային: Ֆրանսիայի հետ առկա առևտրային կապերը, Ալժիրի կառավարությունում փորձառու պաշտոնյաների պակասը և Էվյանի համաձայնագրով նախատեսված Ֆրանսիայի ռազմական ներկայությունը ապահովեցին ֆրանսիական ազդեցության շարունակությունը: Ֆրանսիան ցուցաբերեց անհրաժեշտ ֆինանսական օգնություն, տեխնիկական անձակազմի կայուն մատակարարում[316]:

Չնայած ֆրանսիական կառավարության պատրաստակամությանը՝ պահպանելու համագործակցային հարաբերությունները, Ալժիրը անկախության ձեռք բերումից հետո փնտրեց այլ գործընկերներ՝ նպատակ ունենալով թուլացնել Ֆրանսիայի ազդեցությունն առևտրատնտեսական հարաբերությունների բնագավառում: Սակայն կարճ ժամանակ անց Ալժիրի իշխանությունները որոշակիորեն վերանայեցին Ֆրանսիայի հետ հարաբերություններ վերահաստատելու հնարավորությունը: Արդյունքում՝ Ֆրանսիայի և Ալժիրի կառավարությունների միջև կայացած բանակցությունները հաստատեցին երկու պետությունների շահագրգռվածությունը դիվանագիտական հարաբերությունների վերականգման հարցում: 1974-ին Ալժիրի նախագահ Բումեդենը հայտարարեց, որ «Ֆրանսիայի և Ալժիրի հարաբերությունները կարող են լավ կամ վատ լինել, բայց ոչ մի դեպքում դրանք չեն կարող չնչին լինել»[317]:

Լարված քաղաքական հարաբերությունների ֆոնին այնուամենայնիվ պահպանվեցին ֆրանս-ալժիրյան տնտեսական հարաբերությունները, մասնավորապես նավթի և գազի առևտրի ոլորտում[318]:

---

[316] **Archieves Nationales de la France**, Fonds publics postérieurs à 1789, SÉRIE AG Papiers des chefs de l'État, 5 AG 3 / 1 à 4722. Archives de la Présidence de la République. Valéry Giscard d'Estaing. 1974-1981. Rép. num. détaillé imprimé, par P. Geneste, assisté de V. Chatelain et G. Vitali, Archives nationales – Somogy, éditions d'art, 2007, page 707

[317] **Archieves Nationales de la France**, Fonds publics postérieurs à 1789, SÉRIE AG Papiers des chefs de l'État, 5 AG 3 / 1 à 4722. Archives de la Présidence de la République. Valéry Giscard d'Estaing. 1974-1981. Rép. num. détaillé imprimé, par P. Geneste, assisté de V. Chatelain et G. Vitali, Archives nationales – Somogy, éditions d'art, 2007, page 707 707-710

[318] **Archieves Natinales de la France**, 5AG 4. Archives de la présidence de la République. François Mitterrand. 1981-1995. Inventaire en cours de rédaction. Prendre rendez-vous auprès du département de l'Exécutif et du Législatif.,page 722-724.

Ֆրանս-ալժիրյան հարաբերություններում անդրադարձի է արժանի նաև ներգաղթյալների խնդիրը: Ներգաղթյալների հզոր հոսքը Ֆրանսիա է թափանցում հիմնականում Հյուսիսային Աֆրիկայից, ինչն արդյունք էր այդ տարածաշրջանում ապակայունության առաջացման[319]: Այս իմաստով Մաղրիբի պետությունների և Ֆրանսիայի փոխհարաբերություններում միգրացիոն քաղաքականությունը կարևոր տեղ է զբաղեցնում:

Ալժիրից ներգաղթյալների նկատմամբ Ֆրանսիայի քաղաքականությունը, մեղմ ասած, անբարենպաստ էր: Հյուսիսային Աֆրիկայի համայնքները Ֆրանսիայում շարունակում էին մնալ մեկուսացված, և Ֆրանսիան վերջիններիս համար արհեստական խնդիրներ էր ստեղծում բնակարանի ձեռքբերման, կրթության և աշխատանքի համար:

Ֆրանսիայի համար Հյուսիսային Աֆրիկայի հետ համագործակցության մեկ այլ պետություն էր Մարոկկոն: 1970-80-ական թթ.-ին Ֆրանսիայի քաղաքական մտածելակերպում առկա էր մոտեցում, որ նույնիսկ անկախության ձեռքբերումը Մարոկկոյի նման նախկին գաղութների համար համարվում էր «անբավարար հիմք» ինքնուրույն գործունեության համար, և շատ առումներով նման կարգի պետությունները դեռևս կախված են Ֆրանսիայից: Ֆրանսիան լավատեսորեն էր տրամադրված Մարոկկոյի ապագային, բայց հնարավոր բոլոր առիթներն օգտագործում էր՝ հիշեցնելու Մարոկկոյի գաղութային անցյալը[320]:

Մարոկկոն նախկինի նման չուներ կախյալ վիճակ Ֆրանիայից, բայց նրա կառավարությունը համագործակցում էր Ֆրանսիական կառավարության հետ՝ վերջինիս ապրանքների ներմուծման և սեփական ապրանքները Ֆրանսիա արտահանելու ուղղությամբ[321]:

Հյուսիսային Աֆրիկայի նախկին գաղութներից Թունիսի հետ հարաբերությունների առանձնահատկությունն այն էր, որ ֆրանսիացիները Թունիսում ստեղծել էին միասնական ճակատ, և ինչքան էլ Թունիսը ձգտում էր անկախությունից հետո հարաբերությունները այլ հարթություն տեղափոխել, այնուամենայնիվ Ֆրանսիան Թունիսին վերաբերում էր որպես նախկին գաղութ. շարունակելով գաղութատիրական այլախոհությունը[322]՝ առաջ էր մղվում ֆրանսիացիների շահերը՝ անտեսվելով թունիսցիների ցանկությունները: Սակայն 1970-1980-ական թվականներին ֆրանսիական կառավարությունը փորձում էր բազմաթիվ հարցերի վերաբերյալ արտաքուստ տպավորություն ստեղծել, որ հանդես է գալիս ի պաշտպանություն Թունիսի ժողովրդի, սակայն թունիսցների հակասական վերաբերմունքը հանգեցնում էր կոնֆլիկտների, ինչն էլ՝ իրավիճակի ապակայունության:

1970-1991թթ.-ին Մաղրիբի նկատմամբ Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ռազմավարության կարևոր բաղադրիչ հանդիսացող Մաղրիբի պետությունների հետ կայուն ռազմական կապի պահպանմանը[323] զուգահեռ՝ 1970-

---

[319] **Белов И.,** Сложные отношения Франции и Магриба // Голос со всего мира. – 16.01.2011. – URL: http://ru.rfi.fr/obshchii/20110116-zhurnalyslozhnye-otnosheniya-frantsii-i-stran-magriba

[320] **Archieves Nationales de la France** 5 AG 3 / 1 à 4722. Archives de la Présidence de la République. Valéry Giscard d'Estaing. 1974-1981. Rép. num. détaillé imprimé, par P. Geneste, assisté de V. Chatelain et G. Vitali, Archives nationales – Somogy, éditions d'art, 2007, page 708

[321] La politique étrangère de la France: textes et documents. — Paris: Ministère des Affaires Etrangère, 1975. — 128 p.,

https://www.retronews.fr/thematique/politique?gclid=EAIaIQobChMI4bLagLW74gIVUqmaCh1oaQIaEAAYASAAEgLhCfD_BwE

[322] **Archieves Nationales de la France** 5 AG 3 / 1 à 4722. Archives de la Présidence de la République. Valéry Giscard d'Estaing. 1974-1981. Rép. num. détaillé imprimé, par P. Geneste, assisté de V. Chatelain et G. Vitali, Archives nationales – Somogy, éditions d'art, 2007, page 708.

[323] **Подцероб А.Б.,** Франция – Магриб: два берега одной реки // Институт Ближнего Востока. – 22.07.2007. – URL: http://www.iimes.ru/?p=6029

1991թթ.-ին Մաղրիբի տարածաշրջանը Ֆրանսիայի համար շարունակեց պահպանել կարևոր տնտեսական և առևտրային գործընկերոջ կարգավիճակը, իսկ Աֆրիկյան մայրցամաքը ֆրանսիական ապրանքների ու կապիտալի համար կարևոր շուկա է: Մաղրիբի պետությունների տեսակետից Ֆրանսիան հանդիսանում է իրենց ռեսուրսների և ապրանքների՝ նավթ, գազ, ուրան, գյուղատնտեսական ապրանքներից բամբակ, ձիթապտուղ, ձիթապտղի յուղ, բանջարեղեն, ցիտրուսի սպառման շուկա[324]:

Հարկ է նկատել, որ Մաղրիբի պետությունների հետ և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ ռազմական, և՛ միգրացիոն ոլորտներում Ֆրանսիայի վարած քաղաքական գիծը հիմնականում ձախողվել էր: Միակ առանցքը, որը իրոք կապում էր Ֆրանսիան Մաղրիբին և որոշակի դիվիդենտներ ու ազդեցության լծակներ տալիս, կրթամշակութային քաղաքականություն էր, որի իրականացման կարևոր օղակներից էր Ֆրանկոֆոնիայի կազմակերպությունը:

Եզրահանգում

Ուսումնասիրելով Ֆրանսիայի քաղաքականությունը Հյուսիսային Աֆրիկայում 1970-1990-ական թվականներին՝ կարելի է եզրակացնել, որ Ֆրանսիան «ձախողված էր» Հյուսիսային Աֆրիկայում, քանզի տարածաշրջանում այլ խաղացողների առկայության և Մաղրիբի պետությունների կողմնորշման արդյունքում սահմանափակվում էին Ֆրանսիայի հնարավորությունները ակտիվ քաղաքականություն վարելու տարածաշրջանում: Ֆրասիան այլևս չէր կարող ունենալ ռազմական բազաներ, կամ ազդեցության լծակներ ներքին գործերում, ուստի Ֆրանսիային մնում էր սահմանափակվել տնտեսական ու առևտրային ոլորտում այս կամ այն համագործակցությամբ, մշակութային, լեզվական կապերի ամրապնդմամբ, որի շրջանակում առանցքային եղավ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ստեղծումը և ուժերը կենտրոնացնելը «Սև Աֆրիկայում» իր դիրքերի պահպանմանն ու ամրապնդմանը:

THE FRENCH FOREIGN POLICY IN THE NORTH AFRICAN COUNTRIES IN 1970-1991

ZHANNA HARUTYUNYAN
Yerevan State University, Department of International Relations and Diplomacy, Ph.D.Student, Yerevan, Republic of Armenia

The given article aims to study the relations of France with North African countries that are former French colonies, the political line adopted regarding these countries, and the peculiarities of their relationship. To identify the purpose of the article, the following task was put forward: to identify efforts to shift the focus of relations with North African countries to cultural and linguistic cooperation, due to the lack of political leverage. The article is based on the analysis of archival documents, scientific monographs, and articles with the help of historical-constitutional, historical-comparative, and operational methods. We concluded that the foreign, economic, military and migration policies of the French strategy toward North Africa could be considered as failure. The only axis that truly connected France with the North African countries and gave them certain dividends and levers of influence was the cultural, educational, and linguistic policy.

[324] **Азатян В.В.,** Интеграционные процессы в экономике стран Северной Африки, М., 2000, С. 85.

Keywords: *France, North Africa, Maghrib, colony, military policy, economic policy, migration policy, cultural policy*.

ФРАНЦУЗСКАЯ ВНЕШНЯЯ ПОЛИТИКА ПО ОТНОШЕНИЮ К СЕВЕРО-АФРИКАНСКИМ СТРАНАМ В 1970-1991 ГГ.

ЖАННА АРУТЮНЯН
аспирант факультета международных отношений и дипломатии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения

Целью статьи является рассмотреть отношения Франции с государствами Северной Африки, которые ранее были французскими колониями, и политику, проведенную в отношении этих государств и особенности их взаимоотношений. Для достижения цели в статье была поставлена следующая задача: выявить обусловленный малочисленностью рычагов политического влияния основной акцент в отношениях с государствами Северной Африки, который заключается в предпринимаемых французской стороной усилиях по его переводу в сферу культурного и языкового сотрудничества. Содержание статьи основывается на анализе архивных документов, монографий и статей; в ходе исследования применялись историко-сопоставительный, историко-сравнительный и функциональный методы. В результате исследования мы пришли к выводу, что внешнеполитическая стратегия Франции в отношении стран Северной Африки в политической, экономическойи военной сферах, а также реализации миграционной политики оказалась провальной.

Единственный фактор, который действительно связывал Францию с государствами Северной Африки и давал ей определенные дивиденты и рычаги влияния, была ее культурная, образовательная и языковая политика.

Ключевые слова: *Франция, Северная Африка, Магриб, колония, военная политика, экономическая политика, миграционная политика, культурная политика.*